ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հանրապետության լեռնային և նախալեռնային որոշ տարածքներում պահպանվել են նոսր անտառներ, անտառապուրակներ, որոնք վկայում են նախկինում այդ տարածքների անտառապատ լինելը և էկոլոգիական առումով յուրօրինակ ցուցիչ են անտառավերականգնողական նոր աշխատանքների հիմնավորման համար:

Մեր հանրապետության ներկայիս անտառազուրկ զգալի տարածությունները վաղ անցյալում ծածկված են եղել անտառներով: Այդ են վկայում հին պատմիչները և անտառների մնացորդները: Հայոց թագավորների հովանավորությամբ ու նախաձեռնությամբ արքունի կալվածք Այրարատ նահանգում տնկվել են արհեստական անտառներ: Մովսես Խորենացին հիշատակում է Արմավիր մայրաքաղաքի մոտ հայ ազգապետ Արամանյակի տնկած «Սոսյաց անտառ»-ի մասին (մ.թ.ա. I հազարամյակի 1-ին կես): Երվանդ Դ արքան (մ.թ.ա. III դ. վերջ) Շիրակում տնկել է «Ծննդոց անտառ»-ը: Խոսրով Բ թագավորի օրոք (332-338) տնկել են «Խոսրովակերտ» և «Տաճար մայրի» անտառները, որոնք շրջափակվել են պարիսպներով և բնակեցվել կենդանիներով ու թռչուններով (Ներկայիս «»Խոսրովի անտառ«» պետական արգելոց): Հայաստանի անտառների զգալի մասը միջին դարերում ոչնչացվել է օտարերկրյա արշավանքների ժամանակ: